ՆՈՒԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԾԷՍԵՐ՝ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ – ՊՍԱԿ – ԹԱՂՈՒՄ

Իւրաքանչիւր մարդու կեանք ներառում է յաջորդական անցումների ամբողջութիւն՝ տարիքային մի փուլից միւսը, որն ուղեկցւում է հոգեւոր ու աշխարհիկ ծէսերով։ Ծէսի մէջ ամփոփուած է առասպելական մտածողութիւնը, եւ այն ունի խորհրդանշական իմաստ։ Թէ՛ ծնունդը (Մկրտութիւն), թէ՛ ամուսնութիւնը (Պսակ) եւ թէ՛ մահը (Թաղում) անցումային ծէսեր են[1]*, որոնց միջեւ դրսեւորւում են ծիսական գործողութիւնների նմանութիւններ, օրինակ՝ Մկրտութեան ժամանակ տեղի է ունենում անցում մի աշխարհից միւսին, այսինքն՝ Մկրտութեամբ մարդը մաքրւում է նախնական, աղամական մեղքից, նորից ծնուելով մկրտութեան աւազանից (ջրից եւ Սուրբ Հոգուց), դառնում է հոգեպէս վերածնուած նոր մարդ եւ մտնում Աստծու արքայութիւն։ Պսակի ժամանակ հարսն ու փեսան ծիսական արարողութեամբ ամուսնութեան կարգին են դասւում,* «կարգը-ւում»*՝ մտնելով մի նոր աշխարհ։ Թաղման ծէսից յետոյ հանգուցեալը որպէս նոր մարդ ծնուելու է նորից՝ յարութեամբ, քանի որ մահը անցումն է մի աշխարհից միւսին. այն ծիսական սահման է երկու աշխարհների միջեւ՝ ողջերի ու մահացածների։*

Այս երեք արարողութիւնների անցումային փուլերն իրականացւում են ծիսական որոշակի գործողութիւններով։ Համապատասխան ծէսերից յետոյ, երբ մտնում են նոր աշխարհ, նոր

---

1 Անցումայի են այն ծէսերը, որոնք ուղեկցում են անձի հասարակական, հոգեւոր, տարիքային անցումը մի կարգավիճակից միւսը, յատկապէս ծնունդը, ամուսնութիւնն ու մահը, որոնք ոչ միայն կարեւոր իրադարձութիւններ են անհատի կեանքում, այլեւ ողջ հասարակութեան, ինչպէս նաեւ տիեզերքի համար։ Տե՛ս ГЕННЕП А. ВАН, *Обряды перехода. Систематическое изучение обрядов.* М.: Восточная литература, 1999, 151։ Տե՛ս նաեւ WINKLER, G., *Das Armenische initiations rituale*, Rome 1982։

© National Library of Armenia

կարգավիճակ են ստանում ե՛ւ մկրտուողը, ե՛ւ պսակուողը, ե՛ւ մահացածը, ինչպէս նուիրագործման (ինիցիացիայի) ծէսի ժամանակ։

Մկրտութիւնը, Պսակը եւ Թաղումը Հայոց Եկեղեցու քրիստոնէական կարեւոր խորհուրդներն են, որոնք կատարուել են ե՛ւ եկեղեցում, ե՛ւ տանը մինչեւ արեւի մայր մտնելը։ Այս արարողութիւնները սկսւում են տանից.

ա) Մկրտութեան ժամանակ՝ տուն–եկեղեցի–տուն

բ) Պսակի ժամանակ՝ տուն–եկեղեցի–տուն (փեսայի տուն)

գ) Թաղման ժամանակ՝ տուն–եկեղեցի–տուն (գերեզմանատուն)։

Մկրտութիւնից երեք (երբեմն եօթ կամ ութ) օր յետոյ հանում էին միւռոնից[2]*։ Եւ ինչպէս Պսակի, այնպէս էլ Մկրտութեան ժամանակ կատարւում էր* «Պսակ վերացուցանելոյ»*ի* («Թագվերաց»*ի) ծէսը.* «Եւ յետ ութ աւուր վերացուցանէ բահանայն զնարօտն ի գլխոյն, և ասէ զաղօթս ի վերայ մկրտելոյն»[3]*։*

Հնում Հարսանիքը տեւում էր եօթ օր (աւելի ուշ շրջանում երեք օր)։ Հարսանեկան արարողութիւններն սկսում էին հինգշաբթի օրուանից՝ եօթ օր, եօթ գիշեր. «Եօթն են աւուրք արարչութեանն։ Եւ շինուածք մեր ի չորս տարեաց են եւ երեք զօրութիւն է հոգւոյն՝ բան, ցասումն եւ ցանկութիւն»[4]։

Թաղման ծիսակատարութիւնների շարքը տեւում էր երեք օր (մինչեւ հանգուցեալին հողին յանձնելը), որին յաջորդում էին եօթն ու քառասունքը։

---

2 ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Ջաւախք*, ի «*Ազգագրական հանդէս*» (այսուհետ՝ ԱՀ), Ա. գիրք, Շուշի 1895, 271։ ՆՈՅՆԻ՝ *Մուշ-Տարօն*, ԱՀ, գիրք XXVI, Թիֆլիս 1916, 181։

3 *Մաշտոց. արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց, բաղդատութեամբ բազմաթիւ եւ հնագիր օրինակաց իբր յիսնից նաեւ հնագոյն երկաթագիր ձեռագրի*, Ս. Ղազար, Վենետիկ 1831 (այսուհետ՝ *Մաշտոց*, Վենետիկ 1831), 37։

4 ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր (այսուհետ՝ Ամարան հատոր),* Ս. Յակոբ, Երուսաղէմ 1998, 203։

© National Library of Armenia

Մկրտութեան ու Պասկի համար եղել են սահմանուած յատուկ օրեր։ Մկրտութիւնը հիմնականում կատարւում էր երեխայի ծննդեան ութերորդ օրը։ Դա կապուած էր Հին Ուխտի աւանդութեան հետ. ինչպէս ընտրեալ հրեաների գաւակներն էին որպէս ուխտի նշան թլփատւում ծննդեան ութերորդ օրը (Ծն. Ժէ.,10–12), այնպէս էլ քրիստոնեաներն էին իրենց «ուխտը» *կապում Քրիստոսի ծննդեան ութերորդ օրուայ հետ*[5]*։ Մկրտութեան համար չկային արգելուած օրեր, իսկ Պասկի համար կային։ Դրանք էին տարուայ բոլոր Կիրակի օրերը (Կիրակի, Տէրունի՝ սուրբ օր է համարւում)՝ առանց բացառութեան, Զորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, հինգ տաղաւար տօների (Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան, Ս. Յարութեան, Վարդավառի, Ս. Աստուածածնի, Խաչվերացի) մեռելոցի օրերը, Ս. Ծննդեան, Անուանակոչութեան, Տեառնընդառաջի, Աւետեաց եւ Համբարձման օրերը, Մեծ Պահքի բոլոր եւ Զատիկի առաջին ութ օրերը, որոնք համարւում էին ապաշխարութեան ու սուգի օրեր, այսինքն՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Նոր Կիրակի ներառեալ, Առաջաւորաց, Վարդավառի, Ս. Աստուածածնի, Խաչվերացի, Յիսնակաց եւ Ս. Ծննդեան չաբաթապահոց հինգ օրերը*[6]*։*

Թէ՛ Մկրտութիւնը, թէ՛ Պասկը եւ թէ՛ Թաղումը մեծ իրաղարձութիւններ էին ոչ միայն ընտանիքի, այլեւ տուեալ համայնքի, հասարակութեան համար, քանի որ դրանք ներառում են կեանքի ու մահուան հիմնական գաղափարները։ Այս ծէսերն ունեցել են նախապատրաստական եւ բուն արարողութիւններ, որոնք կատարուել են յատուկ պատրաստուած վայրերում հոգեւորականի, հարազատների, բարեկամների, ինչպէս եւ մարդկանց որոշակի խմբերի պարտադիր ներկայութեամբ։

---

5 Վաղ դարերում մկրտել են չափահաս տարիքում։ Տե՛ս Վենետիկի Մխիթարեան Մատենադարան (այսուհետ՝ ՎՄՄ), ձեռ. թիւ 457, *Մաշտոց*, Թ. կամ Ժ. դ., *«Կանոն Մկրտութեան [եւ կնունիք տալոյ] յորժամ քրիստոնեա(յ) առնեն»*, թղ. 76ա։ ՃԵՄՃԵՄԵԱՆ, Հ. Ս., *Մկրտութեան արարողութիւնը Մաշտոցներու մէջ*, ի *«Բազմավէպ»*, ՃԻԹ (1971), թիւ 1-2, 27։ ՀԱՅՈՒՆԻ, Հ. Վ., *Ճաշեր եւ խնձոյք հին Հայաստանի մէջ*, Ս. Ղազար, Վենետիկ 1912, 400։

6 ՓՈԼԱԴԵԱՆ, Դ., *Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ խորհուրդները*, Պեյրութ 1957, 94։ ՕՐՄԱՆԵԱՆ, Մ., *Ծիսական բառարան*, Անթիլիաս-Լիբանան 1979, 42։

© National Library of Armenia

Իւրաքանչիւր ոք, ով ցանկանում էր մկրտուել, անցնում էր պատրաստութեան եւ փորձութիւնների երկար ճանապարհ. ծանօթանում էր քրիստոնէական կեանքի սկզբունքներին, Քրիստոսի վարդապետութեանը եւ, ընդհանրապէս, քրիստոնէաբար ապրելու բոլոր մանրամասներին[7]: *Քրիստոնէական եկեղեցու անդամ դառնալու համար պահանջւում էր երկու հիմնական փուլ՝ պատրաստութիւն եւ մկրտութիւն.* «Ջուրին մէջ մտնելը մահուան նշանակ է, ընկղմումը՝ թաղման, ջուրէն դուրս ելլելը՝ յարութեան: Այսպէս, հին մարդը կը մեռնի, նորը յարութիւն կ'առնէ: Մկրտեալը՝ Եկեղեցւոյ՝ փրկուած մարդկութեան մէկ անդամ կ'ըլլայ»[8]: *Այսինքն՝ աստուածային օրէնքը ծէսի միջոցով խորհրդանշում է աշխարհի արարչագործութիւնը, որ եղել է ի սկզբանէ եւ պէտք է շարունակուի։*

Ամուսնանալուց առաջ աղջիկն ու տղան նոյնպէս պէտք է յաղթահարէին որոշ փորձութիւններ՝ բաւական երկար ժամանակ անցկացնելով յատուկ պատրաստուած մի վայրում, որից յետոյ միայն նրանք համարւում էին պատրաստ ամուսնութեանը[9]:

Կեանքի ու մահուան մասին պատկերացումները կարեւոր տեղ են գրաւեցրել իւրաքանչիւր ժողովրդի ծիսական ու առասպելական մտածողութեան մէջ[10]: *Դարերով մարդկանց աշխարհընկալման մէջ ձեւաւորուել է մահուան, յուղարկաւորման, նախնիների յիշատակութեան հետ կապուած որոշակի պատկերացումներ, հաւատալիքներ, ըստ որի՝ մահից յետոյ կայ մի ուրիշ՝ նոր աշխարհ։ Եւ այդ անցումը կատարուել է ծիսակարգով եւ ժամանակի ընթացքում ձեւաւորուած սովորոյթներով, օրինակ՝ մահացածին յատուկ կարգով տանից հանելը, նրա հետ գէնքեր, ձիեր, ծառաներ, աշխատանքային գործիքներ, մթերք, հագուստ ու այլ իրեր դնելը*[11]: *Հանգուցեալի հոգու հանգստութեան համար*

---

7 ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ, Է., *Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը*, Երեւան 1977, 237:

8 ՓՈԼԱԴԵԱՆ, Դ., *Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ խորհուրդները*, 11:

9 ՄԽԻԹԱՐԵԱՆ, Ա., *Պակը եւ հարսանիքը հայոց մէջ՝ ըստ մատենագրական աղբյուրների (V-XVIII դդ.)*, Երեւան 2018, 84, 122:

10 БАЙБУРИН А., *Ритуал в традиционном культуре*, Санкт-Петербург 1993, 101:

11 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Ս. Ղազար, Վենետիկ 1910, 442-443: ՏԱՂԱԻԱՐԵԱՆ, Ն., *Հայոց հին կրօնները*, Կ. Պոլիս 1909, 94:

© National Library of Armenia

կատարում էին համապատասխան ծիսական արարողութիւններ՝ հոգեհանգիստ, հոգեհաց, եօթ, քառասունք, տարի եւ այլն։

Արարողութիւնների ժամանակ կիրառւում էին ծիսական անհրաժեշտ առարկաներ։ Մկրտուողը պէտք է ունենար նոր հագուստ, գօտի, խաչ, մոմ, նարօտ[12]. «Միասին ոլորած կանաչ, կարմիր եւ սպիտակ մետաքսէ թել, որ կապում են Մկրտութեան ժամանակ երեխայի վիզը, իսկ Պասկի ժամանակ՝ հարսի եւ փեսայի վիզը»[13]: Մաշտոց *ծիսական ժողովածոյում*[14], *ինչպէս նաեւ մատենագրական այլ աղբիւրներում յիշատակւում է նաեւ գօտին*. «առաջին գաւտի քրիստոնէականն է, որ յետ կնքոյն յաւազանն զգեցու-

12 Քրիստոնէական ըմբռնումներից ելնելով՝ Գրիգոր Տաթեւացին մեկնում է. «Նարօտին գոյնք որակացն կարմիր եւ սպիտակ՝ արեանն եւ ջրոյն ունին զխորհուրդ բոլխեալ՝ ի կենարար կողէն Քրիստոսի, որով միացեալ պսակեցաւ եկեղեցի սուրբ»: ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, *Ամարան հատոր*, 203: Աւելի վաղ շրջանում նարօտը եղել է կարմիր ու կանաչ. «Ապա զգեցուցանէ նորընծային հանդերձ նոր, եւ պսակէ խաչանիշ նարօտիւ, եւ ծածկէ ի վերայ ամենայնին սպիտակ հանդերձ, եւ տայ զմոմեղէնս կարմիր եւ կանաչ ի ձեռն» (այստեղ խոսքը մկրտուող երեխայի մասին է): *Մաշտոց*, Վենետիկ 1831, 32: Միջնադարեան աղբիւրներում նարօտը մեզ հանդիպում է և՛ երկգոյն, և՛ եռագոյն տարբերակներով («...եւ ապա ոլորէ զերեքգունեան զնարօտն»): Տե՛ս *Մաշտոց. Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ*, յորում հաւաքեալ աւանդին ըստ մեծի մասին Կարգք եւ Կանոնք արարողութեան Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ: Արարեալ ի Նախնեաց, եւ կարգաւորեալ ի մերոց Սրբոց Թարգմանչաց ի շնորհափայլ մեծաց Վարդապետաց, Կ. Պոլիս 1807 (այսուհետ՝ *Մաշտոց*, Պոլիս 1807), 25:

13 *Հայոց բառ ու բան*, աշխ.՝ Ամատունի Ս., Վաղարշապատ 1912, 501: Տե՛ս նաեւ *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ., Երեւան 1981, 405 («Ներկուած բազմերանգ՝ գունագոյն թել եւ հիւսք կամ հիւսուած եւ կերպաս՝ բազմագունի, նկարէն»):

14 «*...Եւ ապա կապէ զնարօտն ի վիզն*: Զգեցո՛, Տէ՛ր, պարանոցի սորա զօրութիւն եւ սրբեա՛ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: *Զմիջացն:* Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի եւ զմտաց սորա եւ շիջուսցէ ի սմանէ զխորհուրդս աղտեղիս եւ զօրութիւն շնորհաց քոց...»: Տե՛ս ՎՄՄ, ձեռ. 711, Մաշտոց, ԺԴ. կամ ԺԵ. դար, թղ. 16ա: Վենետիկի Մխիթարեան Մատենադարանի ձեռագրերի թուային պատճէնն ունենալու համար երախտապարտ ենք Հայր Վահան Օհանեանին:

© National Library of Armenia

ցանէ բահանայն սպիտակ հանդերձ եւ ածէ գաւտի ընդ մէջն, զնաբաւտն՝ մանեալ կարմիր եւ սպիտակ»[15]:

Պսակուողը պէտք է ունենար մատանի, հարսանեկան նոր հանդերձ, գօտի, նարօտ, որ քահանան ոլորում եւ կապում էր փեսայի ու հարսի գլխին։

Ինչպէս մկրտուողն ու պսակուողը, հանգուցեալը նոյնպէս կրել է նոր հագուստ, կօշիկ ու նարօտ։ Ագաթանգեղոսի վկայութեամբ՝ Հռիփսիմեաց կոյսերի թաղման համար բերել են պատանքի գոյնզգոյն նարօտներ. «Իսկ թագաւորն եւ արքայազունքն ամենայն ... բերէին իւղս անուշունս եւ խունկս ազնիւս, եւ զգունագոյն նարաւտս պատանաց...»[16]: *Նարօտը թաղման ծէսում կիրառուել է յատկապէս երիտասարդ հանգուցեալի համար.* «Երիտասարդ հանգուցեալին պատանելիս նոյն կտորից գօտի եւ ուսկապ էին կապում: Հարուստ ննջեցեալին դագաղի մէջ են դնում, որի երեսին կարմիր կամ կանաչ շոր է բաշած լինում»[17]:

Բացի վերոնշեալներից, եղել են պաշտամունքային որոշ այլ առարկաներ, որոնք նոյնպէս ունեցել են կարեւոր նշանակութիւն այս ծէսերում[18], *ինչպէս օրինակ՝ քարը, ջուրը, հողը*[19]:

Հայ իրականութեան մէջ եղել են վէմ քարեր, որոնք ծիսական արարողութեամբ նախապէս օծուած սեղանի փոքր քարեր էին, խորանի հիմնաքարեր[20]: *Քառանկիւնաձեւ վէմ քարերը,*

15 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ, *Մատենագրութիւն. Ճառեր եւ քարոզներ*, հտ. Ա., բնագրերը հրատարակութեան պատրաստեցին Ա. Երզնկացի – Տէր-Սրապեանը եւ Էդ. Բաղդասարեանը, Երեւան 2013, 410:

16 ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, *Պատմութիւն Հայոց*, Մատենագիրք Հայոց, հտ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան 2003, 1666:

17 ԼԱԼԱՅԵԱՆ Ե., *Միսիան*, ԱՀ, գիրք Գ., Թիֆլիս 1898, թիւ 1, 244:

18 ГЕННЕП А. ВАН, *Обряды перехода. Систематическое изучение обрядов,* ст. 141. Տե՛ս նաեւ *Мифы народов мира*, Энциклопедия, т. II, М. 1982, ст. 310:

19 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ 1895: ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք*, ԱՀ, գ. XVII, Թիֆլիս 1908, թիւ 1, 88 եւ այլք:

20 Եկեղեցական ծիսական ժողովածուներում կայ վէմի օրհնութեան կանոն՝ *«Կանոն վէմ աւրհնելոյ»*: Տե՛ս Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. 973, *Ներսէս Պալեանենց Մաշտոց*, XVI դ., 265բ: Ձեռ. 2284, *Մաշտոց*, 64, Լով 1603, 102: Տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, Երուսաղէմ, հտ. Է., 1974, 379:

© National Library of Armenia

սրբազան համարուելով, դրուել են յատուկ վայրերում, ուր ուխտի են գնացել մարդիկ ու երկրպագել, եւ դրանց շուրջ կատարուել են ծիսական արարողութիւններ[21]: *Այն վայրերում, որտեղ չեն եղել եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, կամ դրանք չեն եղել օծուած ու գործող, Պասկը եւ Մկրտութիւնը կատարուել ու մինչեւ այժմ էլ կատարւում են վէմ քարի մօտ*[22]: *Իսկ Թաղման ծէսում քարի դրսեւորումներն են գերեզմանաքարը, տապանաքարն ու խաչքարը։*

Ջուրը՝ որպէս մաքրագործման տարր, ծիսական կարեւոր նշանակութիւն ունի թէ՛ կենցաղում եւ թէ՛ մարդու կեանքի երեք տարբեր փուլերում ծնունդի ժամանակ՝ Մկրտութեան, հասունացման ժամանակ՝ Հարսանեկան եւ մահուան ժամանակ՝ Թաղման ծէսերով։

Հայոց եկեղեցում Մկրտութիւնը կատարւում է երեքանգամեայ ընկղմամբ՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով. «Եւ երիցս ընկղմեցուցանէ զնա ընդ ջրովն, լուանալով զբովանդակ մարմինն, թաղեալ զմեղս հնութեան, որ նշանակէ զերեքօրեայ թաղմանն Քրիստոսի զկցորդութիւն»[23]: *Մկրտութիւնն ունի թաղման ու յարութեան խորհուրդ. երեք անգամ Մկրտութեան աւազանի մէջ ընկղմելը խորհրդանշում է Քրիստոսի թաղումը, իսկ աւազանից հանելը՝ յարութիւնը.* «Եւ մկրտութիւնս մեր՝ թաղման եւ զյարութեան ունի խորհուրդ. երեք անգամ ընկղմելն՝ զերեքօրեայ թաղումն նշանակէ, եւ հանելն յաւազանէն՝ զյարութիւն»[24]: *Այս արարողութեամբ թաղւում է հին մարդը, վերածնւում է նոր մարդ, այսինքն՝ մահուան ու կեանքի, ծնունդի սահմանները դառնում են ընդհանուր։*

Նմանատիպ արարողութիւն կատարուել է նաեւ Պասկի ժամանակ։ Լողացնում են նորապսակներին, այսինքն՝ նրանք ամբողջ մարմնով ընկղմւում են ջրում, մաքրագործւում մեղքերից։ Եթէ մկրտուող երեխային երեք անգամ մտցնում էին ջրի մէջ եւ

21 ՕՐՄԱՆԵԱՆ Մ., *Ծիսական բառարան*, 189:

22 ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա., *Պասկը եւ հարսանիքը հայոց մէջ՝ ըստ մատենագրական աղբյուրների (V-XVIII դդ.)*, 155:

23 *Մաշտոց*, Վենետիկ 1831, 25:

24 ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, *Ամարան հատոր*, 145:

© National Library of Armenia

հանում, ապա «Փեսա-բաղնիքի» *արարողութեան աւարտին քահանան երեք թաս ջուր էր լցնում փեսայի վրայ.*

«Զհին մարդըն նորոգելով՝ Փրկիչն ի մկրտութիւն գայ այսօր,
Զի զապականեալ ըզբնութիւնս ջրով, նորըս գործեսցէ՝
Անապական ըզգեստ փոխարէն տալով մեզ»[25]:

Կրօնական գրականութեան մէջ, ինչպէս նաեւ մանրանկարներում յաճախ ենք տեսնում Քրիստոսին՝ վիշապ օձին սպանելիս. դա վիշապամարտի դրսեւորումն է, որի նախատիպը հասնում է մինչեւ առասպելական անցեալ: Այդ գաղափարն արտայայտուել է թէ՛ էպոսում, թէ՛ հեքիաթներում ու առասպելներում եւ թէ՛ Հարսանիքում[26] *ու Մկրտութեան ծէսում.* «Մկրտութեան գաղափարը՝ Քրիստոսի մահուան ջրերն իջնելը, դրանք ապականութիւնից մաքրելու եւ ջրերը օծելու նպատակով, ըստ երեւոյթին, նուիրագործութեան ընդհանուր խորհրդանշական՝ յետագայ վերածննդի նպատակով՝ մահուան թագաւորութիւն իջնելու քրիստոնէական իմաստաւորումն է»[27]:

Սակայն, ըստ քրիստոնէական գաղափարաբանութեան, եթէ Մկրտութեամբ դառնում ենք Եկեղեցու անդամ, ապա Դրոշմով՝ Քրիստոսի զինուոր, որ պէտք է պայքարի չարի դէմ, այսինքն՝ այդ առաքելութիւնը Դրոշմով շնորհւում է մկրտուողին. «Մկրտութեամբն ծնանիմք ի յեկեղեցիս որպէս որդիս Աստուծոյ, եւ դրոշմելովն՝ լինիմք զինուոր Քրիստոսի ընդդէմ թշնամւոյն սատանայի: Եւ նախ ճակատն դրոշմեմք, զի առանց երկիւղի զինեսցին, եւ ապա զբոլոր անդամսն սպառազինեսցուք»[28]:

---

25 ՄՄ, ձեռ. 8406, Մաշտոց ձեռաց, գրուել է Կաֆայում, իսկ յետագայում ընդօրինակուել է Նախիջեւանում, ԺԷ., ԺԸ. դդ., 4ա:

26 Հարսանիքում սպառազինուած փեսան հանդէս է գալիս որպէս վիշապամարտիկ: ՄԽԻԹԱՐԵԱՆ, Ա., *Վիշապամարտի դրսեւորումները հարսանեկան ծէսում*, ի *Վիշապը հէքիաթի եւ իրականութեան սահմանին*, Երեւան 2019, 226-231:

27 ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Լ., *Քրիստոսը որպէս վիշապամարտիկ. եկեղեցական աւանդոյթը եւ նկարչի յիշողութիւնը,* ի *Վիշապը հէքիաթի եւ իրականութեան սահմանին*, Երեւան 2019, 363: Այս մասին տե՛ս նաեւ АБРАМЯН Л. А., *Христос как змееборец: церковная традиция и память художника*, Мифологические представления в народном творчестве, Москва 1993, 165-179:

28 ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, *Ամարան հատոր,* 151:

© National Library of Armenia

Նուիրագործման ծէսով մարդը մաքրագործւում է ջրով նախ՝ Մկրտութեամբ, ապա՝ Պսակով եւ վերջում մահից յետոյ՝ Թաղման ժամանակ[29]: *Նա մահանում է եւ իբրեւ նոր մարդ պէտք է յարութիւն առնի Քրիստոսով.* «Որպէս մարմին մեռելոյն ծածկի հողովն եւ հոգին աներեւոյթանայ: Այսպէս եւ մկրտեալն ծածկի ջրով. ա՛յն է, որ զբոլոր մարմինն թանայ եւ ծածկէ Մկրտեալն մեռանի ընդ Քրիստոսի, եւ երիցս ընկղմեալ ի ջուրն՝ ելանէ ի ջրոյն անմահապէս յարութեամբն Քրիստոսի»[30]:

Մաքրագործումն իրականանում է նախ՝ ջրի միջոցով, յետոյ՝ իւղերով (հոտաւէտ խեժ, միւռոն) օծմամբ։ Մկրտութիւնից յետոյ քահանան միւռոնով օծում է մկրտուողի ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը (ափերը), սիրտը, մէջքը (թիկունքը), ոտքերը եւ, դրանցից իւրաքանչիւրին քսելով միւռոնը, ասում է համապատասխան բանաձեւերը[31]։

Պսակի ժամանակ եկեղեցում քահանան յատուկ արարողութեամբ խաչով օրհնում է[32] *հարսի ու փեսայի հագուստները*[33]: *Պսակում դրոշմ է հանդիսանում մատանին՝ որպէս սիրոյ առհաւատչեայ եւ խորհրդանիշ, որ* «ցուցանէ զմին եւ զբոլոր (պսակաձեւ, գնդաձեւ) եւ զկատարեալ սէրն հարսին եւ փեսային»[34]: *Այսինքն՝ սէրը պէտք է լինի կատարեալ եւ ամբողջական, ինչպէս տիեզերքը։*

Թաղման ժամանակ էլ կնքւում է գերեզմանը. «Եւ տեառնագրէ բահանայն զգերեզմանն»[35]։ *Տարբեր խորհուրդներով կընքւում ու դրոշմւում են ե՛ւ մկրտվողը, ե՛ւ պսակուողը, ե՛ւ մահացածը։*

---

29 Թաղման ժամանակ նոյնպէս լողացնում են հանգուցեալին, մաքրում մարմինը, ապա ծածկում հողով՝ թաղում: *«Թաղել»* նշանակում է՝ 1. հողի մեջ մխրճել, 2. ընկղմել, խորասուզել: Տե՛ս ԱՂԱԵԱՆ, Է., *Արդի հայերէնի բացատրական բառարան*, հտ. Ա., Երեւան 1976, 415:

30 ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, *Ամարան հատոր*, 146-147:

31 *Մաշտոց*, Պոլիս 1807, 16:

32 Մաշտոցներում հանդիպում է նաեւ *«տէառնագրէ»* ձեւով: *«Տեառնագրել»* նշանակում է *«կնքել, դրոշմել խաչիւ»* (*Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ., Երեւան 1981, 862):

33 ՄԽԻԹԱՐԵԱՆ, Ա., *Պսակը եւ հարսանիքը հայոց մէջ՝ ըստ մատենագրական աղբյուրների (V-XVIII դդ.)*, 84-94:

34 ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, *Ամարան հատոր*, 198:

35 *Մաշտոց*, Վենետիկ 1831, 232:

© National Library of Armenia

Այս երեք ծիսական արարողութիւնների ժամանակ ոչ միայն լողացնում, մաքրում են ջրով, այլեւ հանելով հին հագուստը՝ հագցնում են նորը։

Մկրտութեան ժամանակ երեխային մերկացնում են, եւ քահանան աղօթքով փորձում է մկրտուողի միջից հեռացնել մեղքերի հնութիւնը եւ նոր կեանքով նորոգել. «Տէ՛ր, արա՛ զսա արժանի մեծի շնորհաց։ Մերկեա՛ ի սմանէ զհնութիւն մեղաց եւ նորոգեա՛ ի կեանս նորս, եւ լցո՛ զաւրութեամբ հոգոյդ սրբոյ որդեգրութիւն կենաց Քրիստոսի քո»[36]։

Նմանատիպ արարողութիւն տեսնում ենք նաեւ Պսակի կարգում, երբ հարսն ու փեսան, հանելով հին հագուստը եւ հագնելով նորը, դառնում են նոր մարդ (թագաւոր եւ թագուհի) եւ մտնում մի նոր աշխարհ՝ ամուսնութեան կարգ[37]. «Հանցէ՛ ի քէն Տէր Աստուած մեր զհին մարդն գործովք իւրովք։ Աստուած զգեցուցանէ նոր մարդն, որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ եւ ճշմարտութեամբ եւ սրբութեամբ»[38]։

Ե՛ւ մկրտուողը, ե՛ւ պսակուողը հագնում են նոր ու սպիտակ հանդերձ. «Սպիտակի գործածութիւնը մարդու կեանքի երեք կարեւորագոյն փուլերում (կնունք-մկրտութիւն, ամուսնութիւն, մահ), երբ առաջնային է դառնում հոգեւոր մաքրութեան, անարատութեան գաղափարը, առնչւում է հէնց այս հանգամանքն ընդգծելու անհրաժեշտութեան հետ, որով եւ պայմանաւորուած է սպիտակի ծիսականօրէն մաքուր գոյնի ընկալումը»[39]։

---

36 *Մաշտոց*, Պոլիս 1807, 15։ Տե՛ս նաեւ ՎՄՄ, ձեռ. թիւ 457, Մաշտոց Ա., Թ. կամ Ժ. դար, *«Կանոն Մկրտութեան [եւ կնունք տալոյ] յորժամ քրիստոնեա(յ) առնեն»*, 73բ։ Գրիգոր Տաթեւացին մեկնում է. *«... Մերկացուցանելն ի զգեստէն՝ զմերկութիւնն Ադամայ ցուցանէ. եւ սա մերկանայ զհին մարդն Ադամ եւ զգենու զնորն Ադամ՝ զՔրիստոս»*։ Տե՛ս ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ճմերան հատոր*, Ս. Յակոբ, Երուսաղէմ 1998, 60։

37 Տե՛ս ПРОПП В. Я., *Исторические корни волшебной сказки*, Ленинград, 1946, 48, 98։

38 ՄՄ, ձեռ. 841, ժողովածոյ, ԺԸ. դ., 1ա։ Նաեւ՝ ՄՄ, ձեռ. 5087, ժողովածոյ, Կտուց անապատ, 1694 թ., 310բ։

39 ՍՏԵՓԱՆԵԱՆ Ա., *Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսական, գունային եւ նշանային համակարգեր)*, ի *«Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն»*, պր. 22, Երեւան 2007, 36։

© National Library of Armenia

Սակայն Հ. Ղեւոնդ Ալիշանը յիշատակում է, որ սգոյ ժամանակ էլ են հագել սպիտակ. սեւ հագնելը յատուկ է եղել հասարակ ժողովրդին, իսկ սպիտակը՝ թագաւորներին, ազնուականներին. «Սգոյ նշանաց մէջ սեւութիւնն հասարակ է գրեթէ ամենայն ազգաց, բայց սպիտակութիւն՝ նշանաւոր է մերազնեայց մէջ, թէ ոչ ամէնուն, բայց մեծամեծաց կամ թագաւորաց եւ բահանայից համար, որոց յատուկ էր եւ սպիտակ հագնիլն... Թուի, թէ անոնց արքունական եւ սրբազան աստիճանը զրկել համարուէր սգոյ սեւն. անոր համար դագաղին եւ յուղարկաւորութեան սպասին եւ սպասաւորի՝ սպիտակազգեստ ըլլային: Այս սովորութիւնս՝ յարբունիս Հայոց՝ ինչուան վերջին հարստութեան (Ռուբինեանց) մէջ այլ պահուած էր»[40]:

Այս արարողութիւններին (ինչպէս նաեւ արարողութիւնից առաջ եւ յետոյ), յատկապէս՝ հարսանիքի եւ սգոյ ժամանակ տեղի էր ունենում զգեստափոխութիւն (զգեստափոխւում էին նաեւ հարազատները)։

Միսական այս արարողութիւններն իրականացնելու համար եկեղեցական որոշ կանոններ սահմանուել են նաեւ հոգեւորականների համար։ Օրինակ՝ քահանաները քաղցած վիճակում պէտք է կատարէին Պասկն ու Կնունքը եկեղեցիներում, եւ արարողութիւնները պէտք է երկիւղածութեամբ լինէին՝ առանց գրոյցի ու ծիծաղի, հարազատների աղօթքների ընկերակցութեամբ[41]: *Դա է վկայում նաեւ Յովհաննէս Իմաստասէրի (Օձնեցու) սահմանած ԺԸ. կանոնը*[42]: *Քահանան իրաւունք չունէր ապօրինի ամուսնացածների (եկեղեցով չամուսնացածները կամ երկրորդ կին ունեցողները) կամ ապօրինի կին ունեցողների տունն օրհնելու, Կնունքն ու Թաղման կարգը կատարելու, մատաղից բաժին տալու եւ այլ դէպքերում*[43]:

---

40 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց*, 442-443: Տե՛ս նաեւ ՏԱՂԱԻԱՐԵԱՆ Ն., *Հայոց հին կրօնները*, 94:

41 ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմութիւն հայոց*, աշխտ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆԵԱՆ, Կ., Երեւան 1961, 304:

42 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻՁՆԵՑԻ, *Մատենագրութիւնք*, Ս. Ղազար, Վենետիկ 1833, 27: Յովհան Օձնեցու եւ նրա ժառանգութեան մասին տե՛ս *Մատենագիրք Հայոց*, Ը. դար, Է. հտ., Անթիլիաս-Լիբանան 2007, 11-707:

43 ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Բորչալուի գաւառ*, ԱՀ, գիրք X, Թիֆլիս 1903, 134:

© National Library of Armenia

Հայոց աւանդական ընտանիքներում շատ կարեւոր է եղել թէ՛ կնքահօր եւ թէ՛ քաւորի դերը. նրանք ամենայարգուած անձինք են համարուել։ Նրանց յատուկ հրաւէրով (նուէրներով ու դհոլ-զուռնայով) են կանչել մասնակցելու եւ կատարելու արարողութիւնը։ Ինչպէս վկայում են փաստերն ու վերլուծութիւնները, քաւորը, կատարելով ամենակարեւոր կրօնական դերը ամուսնութեան ընթացքում, իրականացնում է նաև քուրմի գործառոյթը[44]: *Նորահարսի նկատմամբ քաւորի լիարժէք իրաւունքը հետք է թողել նաեւ Մկրտութեան ծէսում*[45], *եւ նա յետագայում դառնում էր մկրտուող երեխայի* «հոգեւոր» *հայրը՝* «կնքահայրը»։ *Այսինքն՝ քաւորը մասնակից է լինում ե՛ւ ամուսնութեանը, ե՛ւ երեխայի մկրտութեանը (կնքահայր)։ Ազգագրական որոշ շրջաններում անգամ նոյնացել են քաւորի եւ կնքահօր գործառոյթները, չնայած որ դրանք տարբեր են*[46]:

Մկրտութեան, Հարսանիքի եւ Թաղման արարողութիւններում առկայ են եղել ծիսական երգերն ու պարերը, որոնք կատարուել են տարիքային մի փուլից միւսին անցնելու, երկու գերդաստանների միջեւ կապեր հաստատելու, հարս ու փեսային չար ուժերից պաշտպանելու, նրանց պտղաբերութիւնն ու սերունդը, կեանքն ու բարօրութիւնը ապահովելու համար, ինչպէս նաև հրաժեշտի, յիշատակութեան, մահուան, գերեզմանի սգերգեր ու պարեր։

Հարսանեկան ողջ արարողութիւնն ուղեկցւում էր երգերով[47] *ու պարերով՝ նորահարսի ձեռքերը հինայ դնելիս, շորերը հագցնելիս, ծամերը հիւսելիս* («գլուխ գովելու» *երգեր*) *եւ այս-*

---

44 ԻՓԷԿԵԱՆ, Գ., *Քաւոր*, ԱՀ, XXIV գիրք, Թիֆլիս 1913, 105: ԲԴՈԵԱՆ, Վ., *Երկրագործական մշակոյթը Հայաստանում*, Երեւան 1972, 151:

45 ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, Խ., *Հին Հայաստանի կուլտուրան*, հտ. Ա, Երեւան 1931, 245:

46 ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Բորչալուի գաւառ*, ԱՀ, 222: ԵՐԶՆԿԵԱՆՑ, Գ., *Լօռուայ հարսանիք*, ԱՀ, գիրք Գ., թիւ 1, Թիֆլիս 1898, 332: ՍՏԵՓԱՆԵԱՆ, Գ., *Երգնկա*, Երեւան 2005, 421: ԹԵՄՈՒՐՃԵԱՆ, Վ., *Գամիրքի հայերը*, ի *«Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն»*, հտ. Ա., Երեւան 1970, 118:

47 Իսկ եկեղեցում քահանան է արարողութիւնը կատարում՝ շարականներ երգելով:

© National Library of Armenia

պէս համապատասխանաբար բոլոր արարողութիւններում։ Երգում էին նաեւ հրաժեշտի ու բաժանման երգեր («Շեմբի՛կ, մի՛ ժաժա», «Հրաժեշտ հարսի»)։ *Աղջիկը հայրական տան օջախին հրաժեշտ էր տալիս յատուկ արարողութեամբ*[48]. *Ծնկի էր գալիս, համբուրում հօր տան թոնիրը։ Երբ աղջիկը հեռանում էր հայրական տնից, նրա հետ դնում էին հագուստ, անհրաժեշտ կենցաղային իրեր եւ այլ պարագաներ։*

Հրաժեշտի ծիսական երգերով ու պարերով ուղեկցում էին նաեւ հանգուցեալին այլ աշխարհ՝ ծիսահմայական մտքով, խօսքով ու գործողութեամբ։ Համապարփակ հնամենի միտք-խօսք-գործ երրորդութիւնն առկա է ինչպէս հարսանեկան, թաղման վաղնջական ծէսերում[49], *այնպէս էլ հոգեւոր ու աշխարհիկ երգերում։*

Հարսանեկան արարողութեան ժամանակ գովերգում էին հարսին ու փեսային, իսկ թաղման ժամանակ՝ հանգուցեալին՝ ողբերգերով ներկայացնելով նրա ապրած կեանքը, փառաբանելով անցած ճանապարհը.

«Ափսո՜ս, հազա՜ր ափսոս մեր թաղլան Դաւիթ,
Ա՜խ, հալա մեր թաղլա՛ն Դաւիթ.
Ափսո՜ս, հազա՜ր ափսոս եղնիկն ջահել,
Որ գնաց մեր Սասնայ տնէն»[50]:

Ծիսական արարողութիւնները դրսեւորւում էին նաեւ պարերի միջոցով՝ նշաններով ու շարժումներով։ Մահուան, թաղման, սգոյ եւ յիշատակութեան պարերը միաժամանակ ապահովում են աշխարհի ծիսական մաքրման գործընթացը[51]:

«... Յետ մահուան Ներսէսի յօրժամ զմեռեալն լային, փողով ու փանդռօք եւ վնօք զկոծսն պարուցն կաբաւելով, արբ եւ կանայք պղծութեամբ ճիւաղութեամբ պարուբ դէմ ընդ դէմ հարկանելով եւ կամ ծափս հարկանելով, զմեռեալն յուղարկէին»[52]:

Մկրտութեան ժամանակ համեմատաբար քիչ են կատարուել ծիսական երգեր ու պարեր։ Վաղ ժամանակներում Մկրը-

---

48 ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Գանձակի գաւառ*, ԱՀ, գիրք Զ., Թ., 1900, 255-256: ՆՈՅՆԻ՝ *Ջաւախք*, 253:

49 АБРАМЯН Л. А., *Первобытный праздник и мифология*, Ереван 1983, 27.

50 *Սասունցի Դավիթ. Հայկական ժողովրդական էպոս*, Երեւան 1939, 262:

51 ԽԱՉԱՏՐԵԱՆ, Ժ., *Ծիսական պարը հայոց հաւատալիքների համատեքստում,* Երեւան 2014, 64:

52 ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, *Հայոց պատմութիւն*, Վենետիկ 1914, 24:

© National Library of Armenia

տութեան խորհուրդը եկեղեցում աւարտելուց յետոյ քահանան եկեղեցուց մկրտուողի տուն գնալու ճանապարհին երգել է շարականներ ու հնչեցրել զանգակներ[53], *որն ունեցել է չարը վանելու նշանակութիւն։*

Այս ծէսերից առաջ, դրանցից յետոյ եւ բուն արարողութիւններին եղել են որոշ սովորոյթներ (այդ թւում՝ արգելուած)։ Հարսանեկան ծէսի եօթնօրեայ շրջանում հարեւաններն ու հարազատները տղայի ընտանիքին աջակցում էին թէ՛ նիւթապէս (տրւում էին նուէրներ կամ գումար, որոնք փոխադարձ օգնութեան ձեւեր էին)՝ ծախսերը հոգալու համար, թէ՛ ֆիզիկապէս՝ օգնելով տան ու կենցաղային այլ գործերում, որոնց մասնակցում էր նաեւ ընտանիքը։ Թաղման ծէսի ժամանակ կենցաղային բոլոր հոգսերը հոգում էին հարեւաններն ու հարազատները[54]:

Արարողութիւններից յետոյ պահւում էին որոշակի օրեր՝ եօթ, քառասունք (Մկրտութեան ու Պասկի համար կար «քառասունքակոխ» *հասկացութիւնը)։*

Հասարակական ճանաչման հետ կապուած սովորոյթներից էին «աչքալուսանքը», «սեղան բերելը» (*տեսակցութեան գալը*), *անուանակոչութիւնը, որոնք, կրելով ընկերային եւ կենցաղային բնոյթ, որոշ իմաստներով վերաբերում էին անցումային շրջաններին։ Անուանակոչութեանը նոր անուն էին ստանում է՛ւ մկրտուողը (եկեղեցում քահանայի կողմից), է՛ւ պսակուողը (հարս-փեսայ, նորահարս-նորափեսայ, թագւոր-թագուհի), է՛ւ մահացածը (հանգուցեալ, ննջեցեալ)։ Հոգեւոր ծնունդի առթիւ Հայոց Եկեղեցում մկրտուողին տալիս են նոր՝ քրիստոնէական անուն։*

Արարողութիւններին հնչում էին մեծարանքի յատուկ խօսքեր, բաժակաճառեր, իսկ Մկրտութեանն ու Հարսանիքին նաեւ՝ օրհնանքներ («Ծլէ՛ք, ծաղկէ՛ք, բա՛ր տաք, մի բարձի ծերանաք», «Եօթը որդով սեղան նստէք», «Մեր թագւորին ու թագուհուն՝ կանաչ արեւ, կարմիր օրեր» *եւ այլն) ու բարեմաղթանք-շնորհաւորանքներ՝ չարը հեռացնելու եւ բարին ու երջանկութիւնն ակնկալելու նպատակով։ Մկրտութեան ժամանակ բարեմաղթում էին.* «Հօրաւ ըլես, մօրաւ ըլես, կարմիր օրաւ ըլես. ումրդ էրկան ըլի, քու հօրն

53 ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Վայոց ձոր*, ԱՀ, գիրք XIII, Թիֆլիս 1906, թիւ 1, 141:

54 Թաղման ծէսի եօթնօրեայ ագոյ շրջանում հանգուցեալի տանն արգելւում էր լողանալ, լուացք անել, կրակ վառել, կերակուր պատրաստել եւն.:

© National Library of Armenia

ու մօրը հնազանդ ըլլաս»[55]: ***Անգամ տարբերակում էին բարեմաղթանքները. տղայ երեխայի համար ասում էին.*** «Խորունկ կարդացող ըլլաս, գրչէդ կրակ ցաթէ, Աստուծոյ երկիւղն ունենաս՝ եւ հացդ դիւրութեամբ վաստակիս»[56]: ***Իսկ եթէ երեխան աղջիկ էր, ասում էին.*** «Ոսկիներու եւ մարգարիտներու մէջ լողաս, բամբակի պէս սպիտակ ու մաքուր մնաս, հացդ մատակարարել գիտնաս»[57]:

Ընդհանրութիւնների հետ մեկտեղ այս արարողութիւնների միջեւ կային նաեւ տարբերութիւններ, ինչպէս օրինակ՝ եթէ Հարսանիքին պարտադիր կրել են զարդեր, ապա Թաղմանը հանգուցեալի կինը հանել է իր բոլոր զարդերը եւ կտրել ծամերը։ Հակառակ դրան՝ հայերի մէջ ընդունուած սովորութեան համաձայն՝ մինչեւ մահացածի եօթը կամ քառասունքը տղամարդիկ չեն սափրուել։ Իսկ Հարսանեկան արարողութեան ժամանակ կատարւում էր փեսային սափրելու նուիրագործման ծէսը՝ «Փեսա-թրաշը»[58], ***որ համարւում էր զոհաբերութեան ծէսի մի տարբերակ.*** «Շատ հաւանական է, որ այս սովորութիւնը մնացորդ է այն ծէսին, որով մարդիկ զոհ բերելով իրենց մազերը ննջեցեալի ոգուն, արտայայտում են իրենց սէրը, հպատակութիւնը դէպի նա: Ամուսնութեան միջոցում թագաւորի հանդիսաւոր կերպով սափրուելու ծէսը նոյնպէս, որ միանգամայն ընդհանրացած է հայերիս մէջ, պէտք է մնացորդ համարել մի որեւէ աստուածութեան զոհաբերութեան»[59]:

Եւ չնայած քրիստոնէութիւնն իր գաղափարաբանական նոր կնիքն է դրել մարդու կեանքի անցումային շրջանները խորհրդանշող ծիսական արարողութիւնների (Մկրտութիւն, Պսակ, Թաղում) վրայ, այնուամենայնիւ, դրանց հիմքում պահպանուել են հինն ու աւանդականը[60]:

ԱՆԱՀԻՏ ՄԽԻԹԱՐԵԱՆ

---

55 ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., *Գանձակի գաւառ*, ԱՀ, գիրք Զ., Թիֆլիս 1900, 279:

56 *Ակն եւ ակնցիք*, հաւաքեց ՔԷՉԵԱՆ, Ա., աշխտ. ՊԱՐՍԱՄԵԱՆ, Մ., Փարիզ 1952, 254:

57 Անդ:

58 ВАРДАНЯН Л. М.,*Традиции мужских возрастных групп у армян (конец XIX–начало XX в.)* // ՀԱԲ 12, Երեւան 1981, 86-142: ՇԱԳՈՒԵԱՆ, Գ., *«Նոր օր, նոր գիշեր». հայոց հարսանիքի համայնապատկեր*, Երեւան 2011, 285-291:

59 *Ծիսական կարգերը Հայոց մէջ*, կազմեց ԼԱԼԱՅԵԱՆ, Ե., Ա. պրակ, Թիֆլիս 1913, 33-34:

60 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս., *Հայ հոգեւոր-կրօնական մշակոյթի միասնականութեան հարցի շուրջ*, ի «*Պատմաբանասիրական Հանդէս*», 2002, թ. 2, 12:

© National Library of Armenia

Summary

TRANSITIONAL RITES OF DEDICATION: BAPTISMS, WEDDINGS, FUNERAL

ANAHIT MKHITARYAN

Each person's life involves a set of successive transitions from one age stage to another, which is accompanied by spiritual and secular rituals. Both Baptism, wedding, and funeral are transitional rites, between which similarities of ritual actions are manifested. For example, during Baptism, there is a transition from one world to another, namely, that is, by Baptism, a person is cleaned from Adam's sin, born again from the baptismal pool (of water and the Holy Spirit), becomes a spiritually reborn new person.

During the wedding, with the rite of Initiation, becomes a new person, and the order of marriage is arranged, entering a new world. At the time of the funeral, one is born from parents as an old person and will be born again by resurrection as a new person, death is a ritual boundary between the two worlds, the living and the dead.

After certain ritual actions, a new status and a new name are given by entering a new world as in the Dedication Rite. Baptisms, weddings, and funerals are the important Christian sacraments of the Armenian Church, which are performed in specially prepared places with the obligatory presence of a clergyman and certain groups of people.

During the ceremonies, each person had to have his appropriate attribute; the one being baptized had to have new clothes, a belt, a cross, a candle,a green and red braid (narot), the person getting marriedhad a ring, a new and luxurious white wedding dress, a belt and a green and red braid. A green and red braid (narot) was also used in the funeral rite, and like the one being baptized and getting married, the dying person also wore new clothes and shoes.

There were certain objects and phenomena of worship that also had common edges in these rituals, such as the worship of water and stone and their many manifestations.

And despite the new ideology of Christianity, the old and traditional ones have been preserved on the basis of ritual ceremonies symbolizing the transitional periods of human life.

© National Library of Armenia